ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՆԱՊԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԵԶՐԱԳԾՈՎ ԴՐԵՆԱԺԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/4

ք. Սիսիան «06» Հունիսի 2022թ.

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա. Հակոբջանյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ֆուտբոլի մարզադաշտի հյուսիս-արևմտյան կողմի հենապատի արտաքին եզրագծով դրենաժի կառուցման

Աշխատանքների անվանումը

աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 90(իննսուն) օրացույցային օրվա ընթացքում:

աշխատանքների կատարման վերջնաժամկետը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ գործադրման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:[28]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված յուրաքանչյուր աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

---

[28] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե կիրառելի չէ:*

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 26645693 (քսանվեց միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար վեց հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որից 4440949 (չորս միլիոն չորս հարյուր քառասուն հազար ինը հարյուր քառասունինը) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում[30.1]:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չ[illegible]ունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

[30.1] *Գանձապետարանում հաշիվներ չունեցող պատվիրատուների դեպքում սույն կետի վերջին պարբերությունը խմբագրվում է հետևյալ բովանդակությամբ. «Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:»*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[32]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված

---

[32] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է տասնմեկ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Սիսիանի համայնք	**<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ**
ք. Սիսիան, Սիսական 31	**ք. Սիսիան, Շիրվանզադե 5**
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.	**<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>**
Հ/Հ 900292670032	**ՓԲԸ Սիսիանի մ/ճ**
ՀՎՀՀ 09215978	**Հ/Հ 220333330649000**
	ՀՎՀՀ 09804085
Համայնքի ղեկավարի պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**	**Տնօրեն** _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

_____

Հավելված թիվ 1
«06» Հոկտեմբեր 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՆԱՊԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԵԶՐԱԳԾՈՎ ԴՐԵՆԱԺԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Աշխատանքների կատարման ծավալաթերթ-նախահաշիվները կցվում է պայմանագրին:

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Սյունիքի մարզի, Սիսիանի համայնք, ք. Սիսիան Ֆիզկուլտուրնիկների 5ա հասցեում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292670032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
«06» Հունիսի 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՆԱՊԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԵԶՐԱԳԾՈՎ ԴՐԵՆԱԺԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	Մոբիլիզացիա	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	7 օրացույցային օրվա ընթացքում
2	Հողային աշխատանքների իրականացում բուսաշերտի հեռացում, խրամուղիների և փոսորակների մշակում, խրամուղիների և փոսորակների ետլիցք, այդ թվում ավազի և խճի նախապատրաստական և պաշտպանիչ շերտերի իրականացում, ծածկույթի վերականգնում	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	83 օրացույցային օրվա ընթացքում
3	Մոնտաժային աշխատանքներ (խողովակներ)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	69 օրացույցային օրվա ընթացքում
4	Բետոնե աշխատանքներ (հորեր)	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից	55 օրացույցային օրվա ընթացքում
Ընդամենը		***Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից***	***90 օրացույցային օրվա ընթացքում***

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292670032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար _____ **Ա. Հակոբջանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն _____ **Վ. Վարդանյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 3
«06» հունիս 2022թ. կնքված
ՍՄՍՀ-ԳՀԱՇՁԲ-22/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231156	*Սիսիան համայնքի ֆուտբոլի մարզադաշտի հյուսիս-արևմտյան կողմի հենապատի արտաքին եզրագծով դրենաժի կառուցման աշխատանքներ*	-	-	-	-	26645693	26645693	26645693	26645693	26645693	26645693	26645693	26645693	26645693

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով::*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292670032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի
պաշտոնակատար_____Ա. Հակոբջանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>>
ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն_____Վ. Վարդանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՀՅՈՒՍԻՍ-ԱՐԵՎՄՏՅԱՆ ԿՈՂՄԻ ՀԵՆԱՊԱՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԵԶՐԱԳԾՈՎ ԴՐԵՆԱԺԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Հ/հ	Աշխատանքների անվանումը	Չափի միավորը	Քանակը	Արժեքը,հազ.դրամ		Կշիռը ըստ հրավերի %	Կշիռը՝ ըստ մասնակցի %
				միավ.	ընդհամ.		
1	3	4	5	6	7	8	9
	Ι. ԴՐԵՆԱԺԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ						
	Ι.1. Դրենաժային կոլեկտոր-ԴԿ1					**43,98%**	**43,98%**
	Հողային և շինարարական աշխատանքներ						
1	Բուսականության շերտի հեռացում (եղեգի, խոտածածկույթի, մինչև 50սմ արմատների խորությամբ)	100մ^2	4,52	19,92	90,045		
2	Բուսականության բարձելով ա/մ	1000մ^3	0,226	841,14	190,098		
3	Բարձած բուսականության տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	260,0	3,02	785,460		
4	Խրամուղու և փոսորակների VII կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով (դրենաժվող հատված)	մ^3	14,0	10,42	145,901		
5	Խրամուղու և փոսորակների VI կարգի նախապես փխրեցված գրունտների մշակում կողալիցքով	1000մ^3	0,014	673,03	9,422		
6	Կողալիցքի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	1,40	1,74	2,434		
7	Խրամուղու և փոսորակների VII կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով	մ^3	9,50	10,42	99,004		
8	Խրամուղու և փոսորակների մշակում VI կարգի նախապես փխրեցված գրունտներում, բարձելով ա/մ	1000մ^3	0,0095	1 750,28	16,628		
9	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	25,0	3,02	75,525		
10	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,113	558,96	63,163		
11	Կողալիցքի V կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	11,30	1,74	19,645		
12	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, բարձելով ա/մ	1000մ^3	0,0265	1 496,30	39,652		
13	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	61,0	3,02	184,281		
14	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,0485	558,96	27,110		
15	Խրամուղում և փոսորակների V կարգի գրունտների փխրեցում հարվածահար մուրճով	100մ^3	0,02	2 314,68	46,294		
16	Խրամուղու և փոսորակի նախապես փխրեցված գրունտների մշակում IV կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով	100մ^3	0,02	498,47	9,969		
17	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,0845	895,67	75,684		
18	Կողալիցքի IV կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	8,45	1,74	14,690		
19	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,0565	895,67	50,605		
20	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով	100մ^3	0,015	498,47	7,477		
21	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,0705	689,90	48,638		
22	Կողալիցքի III կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	7,05	1,74	12,256		
23	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,0465	689,90	32,080		
24	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, ձեռքով	100մ^3	0,015	282,63	4,240		
25	Փոսորակների և խրամուղու լրամշակում III կարգի գրունտներում, ձեռքով, հատակի հարթեցմամբ	100մ^3	0,113	282,63	31,938		
26	Շին աշխատանքների կազմակերպման նպատակով խրամուղուց ջրահեռացման իրականացում պոմպերով	100մ^3	4,74	243,43	1 153,849		

27	Ռետինե ճկուն Φ32մմ խողովակի ձեքբերում՝ շին աշխատանքների կազմակերպման նպատակով դրենաժային ջրերի հեռացման համար	մ	100,0	0,67	66,500		
28	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	100մ^3	0,055	774,34	42,588		
29	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով	100մ^3	0,225	774,34	174,225		
30	Դրենաժային հատվածում խճի նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով h=20սմ բարձրությամբ	100մ^3	0,195	958,03	186,815		
31	100-200մմ ֆրակցիայի գլաքարերից ֆիլտրող շերտի իրականացում	մ^3	128,0	7,01	897,408		
32	40-70մմ ֆրակցիայի բազալտե խճի ֆիլտրող շերտի իրականացում	մ^3	107,50	8,79	944,656		
33	0.001-0.005մմ խոշորության կավից h=70սմ հաստությամբ փականի շերտի ստեղծում, ձեռքով	մ^3	3,0	20,52	61,560		
34	Խրամուղու և փոսորակների ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	1000մ^3	0,1565	96,75	15,141		
35	Ետլիցքի պնևմո տոփանում	100մ^3	1,565	35,26	55,188		
36	Ջրանցքի բետոնե b=50սմ հաստությամբ հենապատի վրա Φ300մմ անցքի բացում գայլիկոնումով	100հա տ	0,20	282,75	56,550		
37	Անցքի փակում ցեմենտավազային շաղախով	100մ^2	0,002	119,32	0,239		
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000		
1	Պոլիէթիլենե DN300(GF) SN8 տիպի լայնուկավոր ակոսավոր դրենաժային խողովակների մոնտաժում	մ	113,0	14,40	1 627,426		
2	Հյուտու DN250(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում	մ	68,0	11,69	795,226		
	Ե/բ ԳԴՀ-1, ԱԴՀ-1-4, D=1.0, Հբանվ.=0.99-1.85						
1	Նախապատրաստական շերտ B7.5 դասի բետոնի h=10սմ	մ^3	1,75	38,90	68,079		
2	Բետոնե վաքի իրականացում B12.5 դասի բետոնից	մ^3	2,50	46,72	116,803		
3	Բետոնե մակերեսի երկաթայնացում	մ^2	0,80	0,56	0,448		
4	D=1.0մ տրամագծով հավաքովի ե/բ էլեմենտներով հորի կառուցում	մ^3	5,40	53,70	289,999		
5	D=1.0մ տրամագծով ե/բ հորերի հատակի սալերի արժեք՝ ՀՍ-10 տիպի	հատ	5	41,23	206,150		
6	Պատի օղակ ՊՕ 10-9 տիպի՝ արժեք	հատ	1	52,83	52,830		
7	Պատի օղակ ՊՕ 10-6 տիպի՝ արժեք	հատ	6	33,50	200,982		
8	Ծածկի սալերի մոնտաժում ԾՍ 1-10 տիպի, պոլիմերավազային ծանր մտոց կափարիչով ՄԼՊԱ 600	հատ	5	131,42	657,115		
9	Ներդիր դետալ	տն	0,011	1 152,56	12,678		
10	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում	տն	0,011	9,59	0,105		
	Լ.2. Դրենաժային կոլեկտոր-ԴԿ$_2$				**9 764,800**	55,82%	55,82%
	Հողային և շինարարական աշխատանքներ						
1	Բուսականության շերտի հեռացում (եղեգի, խոտածածկույթի, մինչև 50սմ արմատների խորությամբ)	100մ^2	3,84	19,92	76,499		
2	Բուսականության բարձելով ա/մ	1000մ^3	0,192	841,14	161,499		
3	Բարձած բուսականության տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	221,0	3,02	667,641		
4	Խրամուղու և փոսորակների VII կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով (դրենաժվող հատված)	մ^3	9,0	10,42	93,794		
5	Խրամուղու և փոսորակների VI կարգի նախապես փխրեցված գրունտների մշակում կողալիցքով	1000մ^3	0,009	673,03	6,057		
6	Կողալիցքի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	0,90	1,74	1,565		
7	Խրամուղու և փոսորակների VII կարգի գրունտների փխրեցում հիդրոմուրճով	մ^3	22,0	10,42	229,273		
8	Խրամուղու և փոսորակների մշակում VI կարգի նախապես փխրեցված գրունտներում, բարձելով ա/մ	1000մ^3	0,022	1 750,28	38,506		
9	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	57,0	3,02	172,197		
10	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,07	558,96	39,127		
11	Կողալիցքի V կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	7,0	1,74	12,170		

12	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, բարձելով ա/մ	1000մ^3	0,0815	1 496,30	121,948		
13	Բարձած գրունտի տեղափոխում մինչև 7,0կմ հեռավորությամբ	տն	187,50	3,02	566,438		
14	Խրամուղու և փոսորակների մշակում V կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,0945	558,96	52,822		
15	Խրամուղում և փոսորակների V կարգի գրունտների փխրեցում հարվածահար մուրճով	100մ^3	0,02	2 314,68	46,294		
16	Խրամուղու և փոսորակի նախապես փխրեցված գրունտների մշակում IV կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով	100մ^3	0,02	498,47	9,969		
17	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,0525	895,67	47,023		
18	Կողալիցքի IV կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	5,25	1,74	9,127		
19	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,132	895,67	118,228		
20	Խրամուղու և փոսորակի մշակում IV կարգի գրունտներում, ձեռքով, կողալիցքով	100մ^3	0,015	498,47	7,477		
21	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով (դրենաժվող հատված)	1000մ^3	0,044	689,90	30,356		
22	Կողալիցքի III կարգի գրունտի համահարթեցում տեղում բուլդոզերով	100մ^2	4,40	1,74	7,649		
23	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, կողալիցքով	1000մ^3	0,11	687,05	75,575		
24	Խրամուղու և փոսորակի մշակում III կարգի գրունտներում, ձեռքով	100մ^3	0,015	282,63	4,240		
25	Փոսորակների և խրամուղու լրամշակում III կարգի գրունտներում, ձեռքով, հատակի հարթեցմամբ	100մ^3	0,14	282,63	39,569		
26	Շին աշխատանքների կազմակերպման նպատակով խրամուղուց ջրահեռացման իրականացում պոմպերով	100մ^3	6,40	243,43	1 557,939		
27	Ռետինե ճկուն Φ32մմ խողովակի ձեքբերում շին աշխատանքների կազմակերպման նպատակով դրենաժային ջրերի հեռացման համար	մ	100,0	0,67	66,500		
28	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում h=10սմ հաստությամբ	100մ^3	0,17	774,34	131,637		
29	Ավազի պաշտպանիչ շերտի իրականացում ձեռքով	100մ^3	0,67	774,34	518,805		
30	Դրենաժային հատվածում խճի նախապատրաստական շերտի իրականացում ձեռքով h=20սմ բարձրությամբ	100մ^3	0,17	958,03	162,865		
31	100-200մմ ֆրակցիայի գլաքարերից ֆիլտրող շերտի իրականացում	մ^3	70,50	7,01	494,276		
32	40-70մմ ֆրակցիայի բազալտե խճի ֆիլտրող շերտի իրականացում	մ^3	83,50	8,79	733,756		
33	0.001-0.005մմ խոշորության կավից h=70սմ հաստությամբ փականի շերտի ստեղծում, ձեռքով	մ^3	3,0	20,52	61,560		
34	Խրամուղու և փոսորակների ետլիցք, կողալիցքի մշակված գրունտներից	1000մ^3	0,3415	96,75	33,039		
35	Ետլիցքի պնևմո տոփանում	100մ^3	3,415	35,26	120,427		
36	Ջրանցքի բետոնե b=50սմ հաստությամբ հենապատի վրա Φ300մմ անցքի բացում գայլիկոնումով	100հատ	0,20	282,75	56,550		
37	Անցքի փակում ցեմենտավազային շաղախով	100մ^2	0,002	119,32	0,239		
	Տեխնոլոգիական աշխատանքներ			0,00	0,000		
1	Պոլիէթիլենե DN300(GF) SN8 տիպի լայնուկավոր ակոսավոր դրենաժային խողովակների մոնտաժում	մ	96,0	14,40	1 382,592		
2	Կոյուղու DN250(GF) SN8 տիպի պոլիէթիլենե լայնուկավոր ակոսավոր խողովակների մոնտաժում	մ	206,0	11,69	2 409,067		
	Ե/բ ԳԴՀ-1-3, ԱԴՀ-2-4, D=1.0, Հրանվ.=1.05-1.55			0,00	0,000		
1	Նախապատրաստական շերտ B7.5 դասի բետոնի h=10սմ	մ^3	2,10	38,90	81,695		
2	Բետոնե վաքի իրականացում B12.5 դասի բետոնից առվակի երկաթայնացումով	մ^3	2,90	46,72	135,491		
3	Բետոնե մակերեսի երկաթայնացում	մ^2	0,80	0,56	0,448		
4	D=1.0մ տրամագծով հավաքովի ե/բ էլեմենտներով հորի կառուցում	մ^3	6,50	53,70	349,073		

5	D=1.0մ տրամագծով և/բ հորերի հատակի սալերի արժեք՝ ՀՍ-10 տիպի	հատ	6	41,23	247,380		
6	Պատի օղակ ՊՕ 10-9 տիպի՝արժեք	հատ	1	52,83	52,830		
7	Պատի օղակ ՊՕ 10-6 տիպի՝արժեք	հատ	9	33,50	301,473		
8	Ծածկի սալերի մոնտաժում ԾՍ 1-10 տիպի, պոլիմերավազային ծանր մտոց կափարիչով ՄԼՊԱ 600	հատ	6	131,42	788,538		
9	Ներդիր դետալ	տն	0,062	1 152,56	71,459		
10	Մետաղական կոնստրուկցիաների երկշերտ յուղաներկում	տն	0,062	21,51	1,333		
	I.3. Շարժական փոխագուցավոր ելարան			0,00	12 394,012	0,21%	0,21%
1	H=50սմ-150սմ շարժական փոխագուցավոր ելարանի ձեռքբերում (ելարանը նախատեսվում է հանձնել ջրահեռացման համակարգը շահագործող կազմակերպությանը)	հատ	1	45,93	45,933		
	Ընդամենը՝				22 204,744	100,00%	100,0%
	ԱԱՀ 20%				4 440,949		
	Ընդհանուրը				26 645,693		

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Սիսիանի համայնք
ք. Սիսիան, Սիսական 31
ՀՀ Ֆին.նախ. գործ. վարչ.
Հ/Հ 900292670032
ՀՎՀՀ 09215978

Համայնքի ղեկավարի պաշտոնակատար ____________ Ա. Հակոբջանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԻԴՐՈ>> ՍՊԸ
ք. Սիսիան, Շիրվանզադե 5
<<Ակբա-կրեդիտ ագրիկոլ բանկ>> ՓԲԸ Սիսիանի մ/ճ
Հ/Հ 220333330649000
ՀՎՀՀ 09804085

Տնօրեն ____________ Վ. Վարդանյան
(ստորագրություն)